

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ՃԱՆԱՊԱՐՅԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ.
«ԼԵՎՈՆԻ ՎԻՇՏԸ» ՊՈՆԵՍԸ

Բանաստեղծների կյանքում հաճախ լինում են եզակի աստղային ժամեր, երբ տարերային բռնկումով լույս աշխարհ է գալիս նրանց «կյանքի գիրքը», որից առաջ և որից հետո ստեղծածը միայն տարբեր կողմերից լրացնում, ամբողջացնում է այն: Այդ երևույթի ցայտուն արտահայտություններից է Սմբատ Շահագիզի «Լևոնի վիշտը» քնարաէպիկական ծրագրային պոեմը՝ նրա լուսավորական ռոմանտիզմի բարձրակետը: Այս պոեմն ըստ էության հեղինակի ստեղծագործական ճանապարհի հանրագումարն է, ուր նա ի մի է բերում իր ազգային գաղափարախոսության ու գեղագիտական դավանանքի եզրերը, որ տարբեր ուղղություններով ձգվում էին նրա անձնական ու քաղաքացիական քնարերգության մեջ: Բանաստեղծը կարծես զգում էր, որ դա լինելու է իր կարապի երգը, ուստի ընթերցողի առջև անմնացորդ բաց է անում ինքն իրեն, իր ներաշխարհը, հայ կյանքի մասին իր պատկերացումները, այն մտածությունների ու խոհերի իրական ոլորտը, որի միջով անցնում և համակարգի կերպ ու բովանդակություն էին ստանում ժամանակի հովերը, պահանջներն ու խնդիրները:

Պոեմի հրատարակությունից հետո ռոմանտիկ մտածող ու լուսավորիչ Շահագիզը, որ գլխովին նվիրվել էր մանկավարժական գործունեությանը և միայն առիթից առիթ էր հիշում ու վերապրում իր երբեմնի բանաստեղծական ոգևորության պահերը, դեռ երկար տարիներ պիտի որոներ աշխարհի հետ հաղորդակցման իր ներքին ծարավը հագեցնելու նոր ուղիներ, մինչև որ 19-րդ դարի 60-ականների իր քաղաքացիական ներշնչումների ոգին, դրանց ազգային-հասարակական դրդիչները 80-90-ականներին վերստին կարթնանային հրապարակախոսության մեջ: Շահագիզի հրապարակախոսությունը նրա ծրագրային պոեմի գաղափարագեղագիտական հարցադրումների վերաբարձունքն է պատմական նոր իրադրության պայմաններում: Նրա «Հրապարակախոս ձայն»-ի, «Ամառնային նամակներ»-ի, «Հիշողություններ...»-ի, «Հոբելյանական տարեդարձ»-ի, «Մի քանի խոսք իմ ընթերցողներին» դիմում-խորհրդածության և մյուս հրապարակախոսական ելքերի աշխարհը լիովին հասկանալի չի լինի՝ առանց «Լևոնի վիշտը» պոեմի, ինչպես և վերջինիս գեղարվեստական իրականությունը նորովի կարող է իմաստավորվել միայն այդ իրականությունը ձևավորող խնդիրների հրապարակախոսական վերաբարձունքների լույսի

տակ: Իզուր չէ, որ Շահազիզի հրապարակախոսության մեջ այնքան հաճախ է հիշվում «Լևոնի վիշտը» պոեմը:

Գրականագիտության մեջ առանձնապես շատ է խոսվել Շահազիզի պոեմի և Բայրոնի «Չայլդ Ջարոլդ»-ի ծնական ընդհանրությունների մասին: Դա ակնհայտ իրողություն է, որ նկատել են դեռևս բանաստեղծի առաջին քննադատները: Շահազիզի «բայրոնիզմի» ուղղակի արտահայտությունները քիչ չեն նաև նրա քնարերգության մեջ: Հոգեկան կապով պիտի բացատրել «Լևոնի վշտի» առանձին հատվածների գրեթե բառացի նմանությունները Բայրոնի պոեմի հետ: Դրանց վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել քննադատ Եղիշե Մաղաթյանը դեռ 19-րդ դարի 90-ական թվականների սկզբին¹: Բայց ընդհանրություններով հանդերձ՝ «Չայլդ Ջարոլդի» և «Լևոնի վշտի» միջև, թեկուզև ծայրին մակարդակում, կան բնական տարբերություններ, ամենից առաջ այն, որ Բայրոնի հերոսը խռովված հոգով հեռանում է հայրենի անգլիայից՝ էկզոտիկ աշխարհների տենչով տոգորված և հոգին բեռնավոր մարդկության հին ու նոր ցավերի ծանրությամբ: Շահազիզի հերոսն, ընդհակառակը, ուղևորվում է իր ծննդավայրը՝ Հայաստան՝ խավարում խաբիսսփող ժողովրդին լուսավորելու ռոմանտիկ ծրագրերով: Դրա հետ միասին ուսումնասիրողները, ինչպես մեր օրերում, այնպես էլ բանաստեղծի կենդանության ժամանակ, աչքաթող չեն արել երկու պոեմների նաև բովանդակային-ըսկզբունքային տարբերությունները: Շահազիզի մասին առաջին մենագրության (1902, լրացումներով վերահրատարակություն՝ 1905) հեղինակ Յու. Վեսելովսկին, օրինակ, բառացիորեն գրում է. «Լևոնի գլխավոր տարբերությունը իր արևմտաեվրոպական եղբայրակիցներից այն է, որ նրա վիշտը համամարդկային, համաշխարհային բնույթ չի կրում, ունի ըստ էության որոշակի ազգային գունավորում: Ճիշտ է՝ նրան ևս հուզում և տանջում են մարդկային կյանքի ու մարդու անկատարության, երկրային ամեն ինչի անհաստատության հավերժորեն անլուծելի հարցերը. բայց մյուս կողմից նրա վիշտը մի նշանակալից չափով գալիս է հարազատ ժողովրդի կյանքի աննորմալ պայմաններից: Ուստի և Շահազիզի՝ բայրոնիզմի հովերով հղացված պոեմը իր ներքին բովանդակությամբ բուն ազգային և ինքնատիպ ստեղծագործություն է, ուր շատ բան մաքուր տեղային է, հատկապես հայկական»²:

Ուս գրականագետների այս միտքը գրեթե նույնությամբ կրկնվում է հետագա բոլոր ուսումնասիրողների մոտ, որոնք Շահազիզի պոեմի ազգային նկարագրի հիմքը համարում են միայն անմիջական արձագանքը հայ կյանքի

¹ Տես՝ Մաղաթյան Ե., Սմբատ Շահազիզյան բանաստեղծ-հրապարակախոս, «Մուրճ», լրագիր, Թիֆլիս, 1891, № 5:

² Շահազիզյան Ս., Հրապարակախոս ծայր, Մոսկվա, 1881, էջ 3:

հրատապ արդիական հիմնախնդիրներին: Հարց չի դրվել, թե «Լևոնի վիշտը», առհասարակ բանաստեղծի քնարերգությունը ստեղծագործական-հոգեբանական կամ որևէ այլ ուղղությամբ չի՞ կապվում արդյոք հայ հոգևոր մշակույթի հնագույն ու նոր ավանդույթների հետ:

Այդպիսի կապի ամփոփական դրսևորումներ Շահագիզի պոեմում, իհարկե, կան, ինչպես դրանք ակներև են, երբ այն դիտում ենք 19-րդ դարի եվրոպական գրականության և գեղագիտական մտքի համադրությամբ: Հայ մշակույթի հազարամյա ավանդները, ազգային գիտակցության նախնական նստվածքներն իրենց հետքը թողել են նրա բանաստեղծական աշխարհի, մտածողության, նրա, եթե կարելի է ասել, ցեղային աշխարհայեցության խորքային շերտերում և գործառույթում են առավելապես ենթագիտակցականի մակարդակում:

Իր բնույթով հնագույն ազգային ավանդույթներից է գալիս մասնավորապես Շահագիզի հայրենասիրությունը, որով ծայրից ծայր շնչում է «Լևոնի վիշտը»: Հայտնի է, որ հայրենասիրության այդ որակը ամփոփական ազդակն ստացել է Լերմոնտովից: Հիշենք պոեմի «Նախերգանք»-ի բնաբանը՝ «Մարդկանց բավականաչափ կերակրել են քաղցրավենիքներով. դրանից նրանց ստամոքսը վնասվել է. հարկավոր են դառն դեղեր, կծու ճմարտություններ», ինչպես նաև հայտնի տողը՝ «Սիրում են ես հայրենիքը, բայց տարօրինակ սիրով»: Բայց լերմոնտովյան կամ բայրոնյան այդ գիտակցությունը հեռավոր արմատներ ունեն նաև հայ ազգային հոգեբանության, մեր գրականության էջերում մըշտապես հոլովվող հայրենասիրական ոգորումների մեջ, որոնց աշակերտական նստարանից քաջածանոթ էր Շահագիզը:

«Լևոնի վիշտը» պոեմի ստեղծագործական պատմությունից քիչ բան է հայտնի. միայն գիտենք, որ իր գլխավոր երկի վրա բանաստեղծը բավական աշխատել է. վերջնական տարբերակում որոշ հատվածներ դուրս է թողել, տեղ-տեղ հավելումներ է կատարել կամ նորից է գրել: Շահագիզի 30-ամյա հոբելյանի օրերին նրան ուղղած մի նամակում Ս. Մանդինյանը գրում է. «Հիշու՞մ եք, թե քանի գլուխներ Ձեր վիպասանությունից մեր առաջ կարդացել եք, ապա ծվեն-ծվեն պատառել եք, մինչև որ «Լևոնի վիշտը» տպագրված տեսանք և ափսոսացինք, որ մեջը պատռվածների հետքեր չեն մնացել: Հիշու՞մ եք, թե ճեմարանական անկերպարան խոշոր և խրթին բարբառի մեջ ինչպե՞ս էր հնչում Ձեր ուռճացած լեզուն...»³: Այս վկայության մեջ հետաքրքիրն այն է, որ ենթադրել է տալիս, թե պոեմի նախնական տարբերակում հավանաբար եղել են գաղափարական նոր հարցադրումներ, որոնք զրաքննական նկատառումներով հանվել են: Հատկանշական է նաև, որ պոեմը դեռ չտպագրված՝ նրա լեզվական

³ Սմբատ Շահագիզի երեսնամյա հոբելյանը, Մոսկվա, 1894, էջ 103-104:

մշակույթն արդեն արժանացել է պատանի ճեմարանականների ուշադրությանը...

«Լևոնի վշտի» ստեղծագործական պատմության մասին մի այլ տեղեկություն հաղորդում է բանաստեղծի կենսագիր Եր. Շահագիզը նրա երկերի 1947թ. հրատարակության ծանոթագրություններում. «Որ «Լևոնի վշտի» տպագրված և այժմ մեր ձեռքին գտնված օրինակը միանգամից հենց այդպես էլ դուրս չի եկել հեղինակի գրչի տակից, այլ որ նա ունեցել ուրիշ փոփոխումներ,- այդ մասին մենք գիտենք և մի ուրիշ աղբյուրից,- հայտնում է ծանոթագրողը և ավելացնում:- Թարգմանիչ Փիլիպոս Վարդանյանը մեզ պատմել է, թե ինքը, երբ դեռ տպագրված չի եղել «Լևոնի վիշտը», ունեցել է իր ձեռքին նրա ձեռագիրը, որ կարդացել է մի ընկերական շրջանում և, իր նկատողություններն անելով լուսանցքների վրա, վերադարձրել է հեղինակին: Նա էլ, թեև նեղացել է, բայց եղած նկատողությունների համաձայն, մի քանի փոփոխություններ է մտցրել պոեմի մեջ: Տպագրվածի մեջ, օրինակ, Լևոնի վիճակը անհայտ է մնում, այնինչ ձեռագրի մեջ Լևոնը հուսահատությունից և վշտից մեռած է ներկայացրած լինում»⁴:

Երիտասարդ Շահագիզն, այսպիսով, լավ է գիտակցել իր գործի կարևորությունը և օգտագործել է ձեռքի տակ եղած բոլոր հնարավորություններն ու միջոցները, որպեսզի առավելագույնս հարստացնի պոեմի բովանդակությունը ժամանակի հայ իրականության ճշմարտացի պատկերներով, ցույց տա այն իրական անջրպետը, որ կար ու անհաղթահարելի էր իր ազգասեր մտավորականի խոսքը գործի վերածելու ճանապարհին, այդ մտավորականի՝ պատմականորեն ձևավորված հոգեբանությունը, վերջապես, ամբողջության մեջ ներկայացնի գեղարվեստական այն համակարգը, որով մերժվում էին ժամանակի գրական բարբերում առկա որոշ իրողություններ...

«Լևոնի վիշտը», ինչպես երևում է պոեմի «Առ ընթերցողն» նախա-մուտքից, հեղինակի ծրագրային խոսքն է՝ ուղղված «ազգի անդամ և ազգի որդի» կոչվելու իրավունք վաստակած այն ընթերցողներին, որոնց սրտերի վրա ծանրացած է ազգի ներկա կացությունը՝ որպես անձնական ցավ ու մտահոգություն: Ազգային զարթոնքի լուսավորական իդեալներով դաստիարակված, այդ իդեալների բուն ակունքից սնված բանաստեղծ պատանուն լավ հայտնի էր ժամանակի հայ հասարակության շերտավորված կառուցվածքը: Նա գիտեր, որ իր «ժամանակակից վեպը»-ում արտահայտված գաղափարները, ազգային վերածննդի առաջարկվող ծրագրերը շատ շատերի համար անընդունելի կլինեն, շատերն էլ հասու չեն լինի դրանց իրական բովանդակությանն ու

⁴ Շահագիզ Ա., Երկեր. լիակատար ժողովածու, Երևան, 1993, էջ 228:

նպատակներին: Բայց բանաստեղծը համոզված է, որ իրեն հասկացողներ, այնուամենայնիվ, կգտնվեն, թեկուզև դրանք լինեն չնչին փոքրամասնություն: Այդ գիտակցությունն է ներշնչում նրան՝ անթաքույց մերկությամբ ու ճշմարտացիությամբ հրապարակ հանելու հասարակության մարմնի այն թաքուն խոցերը, որոնք միշտ չէ, որ նկատելի են դրսից, բայց ներսից կաթիլ առ կաթիլ քամում են այդ մարմնի կենսագործունեության հյուսերը:

Ինչպես պոեմի գրության ժամանակներում, այնպես էլ հետագայում Շահագիզն անձնական ու գաղափարական հակառակորդների կողքին ունեցել է նաև իր նշանավոր ստեղծագործությունը հասկացող ու գնահատող համակիր բարեկամներ: Պոեմի առաջին քննադատը և ըստ արժանվույն գնահատողը եղել է Ստ. Նազարյանը: «Հյուսիսափայլ»-ի էջերում նա մեծ ոգևորությամբ է ծանուցում բանաստեղծի երկրորդ գրքի լույս աշխարհ գալը՝ բարձր գնահատելով մասնավորապես «Լևոնի վիշտը»։ «Բանաստեղծը,- գրում է նա,- վառված, ամենևին հոգիացած յուր գեղեցիկ, հոյակապ ազգասիրական գաղափարներով, մտածելով և զգալով յուր ազգի ամենալավ օգուտը, ամենայն մասամբ լցուցել է յուր պարտականությունը, շատ տեղ իրեղեն լեզվով դուրս թափելով կուրծքից յուր ջերմաջերմ զգացմունքի հորձանքը, յուր սրտի սուրբ և սրբազան փափագներին ճարտար բացահայտությունք տալով: Դրանց գործադրությունը, ինչպես միշտ, նույնպես և այսօր, մնում է հայկական մարդերի կյանքի գործ և վաստակ: Աստված տա, որ այդ սուրբ հոգեզմայլությամբ հափշտակված բանաստեղծի բարբառը չլիներ դարձյալ ծայն բարբառո հանապատի, ինչպես հազարավոր այդպիսի ծայներ անլսելի ցնդած են հայկական կյանքի տրտում և անմխիթար անապատի մեջ»⁵:

Շահագիզի ստեղծագործությունը և առաջին հերթին, իհարկե, «Լևոնի վիշտը» պոեմը այս բարձր ազգային-հասարակական հինչեղության տեսանկյունից է գնահատվել նաև տասնամյակներ անց: Հատկանշական է քննադատների այն դիտարկումը, թե 60-ական թվականներին բանաստեղծի բարձրացրած խնդիրների հրատապ կենսականությունը հաստատվել է անցած ժամանակների փորձով: Այդ խնդիրները տարիների ընթացքում ոչ միայն չեն հնացել, այլև ձեռք են բերել ավելի լայն արդիական հինչեղություն: Շահագիզի մանկավարժական գործունեության երեսնամյա հոբելյանի հանդիսությունների բանախոսներից մեկը՝ պրոֆ. Ն. Ներսիսյանը, հենց այս դիտակետից է արժեքավորում բանաստեղծի գրական վաստակը: Անդրադառնալով երիտասարդության տարիներին նրա արտահայտած «գաղափարներին ու մտքերին»՝ բանախոսը հատուկ ընդգծում է «նոցա ժամանակակից հասարակական մեծ նշանակու-

⁵ Նազարյանց Ստ., Երկերի ժողովածու, Երևան, 1996, էջ 416:

թյունը»: «Չկա մի առաջադեմ գաղափար,- դիմում է նա հոբեյարին,- որ արծազանք չգտներ Ձեր գրվածքների մեջ: Այս բոլոր գաղափարները, որ քարոզել եք Դուք վաթսուհանգյակյան թվականներին, այժմ ամենապարզ և անհերքելի ճշմարտություն են համարվում: Բայց եթե աչքի առաջ ունենանք, որ այն ժամանակ մեր հասարակությունը ասիական խավարի և անշարժության մեջ էր, որ եվրոպական գիտությունը նոր էր մուտք գործում մեր մեջ առաջադեմ գաղափարներով ոգևորված սակավաթիվ ինտելիգենցիայի շնորհիվ, հասկանալի կլինի Ձեր քաղաքացիական քաջությունը և հասարակության մատուցած Ձեր ծառայությունը: Հայտնի է պատմությունից, որ ամեն մի պարզ գաղափար ստանում է հասարակության ինքնագիտակցության մեջ պատշաճավոր տեղ միայն երկար կռիվ մղելուց հետո, և անշուշտ հասարակությունը երախտապարտ պիտի լինի այն գործիչներին, որոնք աջակցում են այդ գործին»⁶:

«Լևոնի վիշտը» պոեմի գաղափարական մթնոլորտը չուներ նախանշյալական գաղափարների հեղափոխական լիցքավորվածությունը: Բայց և այնպես այդպիսի մի ստեղծագործությամբ հասարակությանը ներկայանալու համար, իրոք, «քաղաքացիական քաջություն» էր պետք, քանի որ հեղինակը մի կողմից պետք է դուրս գար «Հյուսիսսփայլ»-ի լուսավորական իդեալներին թշնամի մի ամբողջ հասարակական մտայնության՝ հանձին հայ կղերի, մյուս կողմից՝ ցարական պաշտոնական քաղաքականության դեմ, որի հեռահար նպատակը փոքր ազգերի ու ազգությունների ծուլումն էր:

Պոեմի բովանդակային առանցքը հայրենիքի գաղափարն է, որ դարեր շարունակ կենտրոնական տեղ է զբաղեցրել հայ գեղարվեստական և ոչ միայն գեղարվեստական մշակույթի մեջ՝ միշտ անբաժան հայրենասիրություն հասկացությունից: Այս վերջինը ժամանակի ընթացքում բազում իմաստափոխություններ է կրել՝ նայած թե հայրենասեր անհատները կամ հասարակությունները ինչպես են ընկալել հայրենիքի գաղափարը: Եթե, ասենք, Խորենացու «Ողբ»-ում գաղափարը խտանում է կորցրած թագավորության՝ ազգային պետականության մեջ, ապա 19-րդ դարի 60-ական թվականներին այդ գաղափարն անբաժան էր ազգային գիտակցությունից: Հայրենիքի բոլոր դժբախտությունների պատճառը, ըստ «Լևոնի վիշտը» պոեմի, այդ գիտակցության բացակայությունն է: Ինչու՞ է Լևոնն իրեն մենակ զգում մոտիկ ընկերների շրջանում, որովհետև նրանց համար անհասկանալի է իր հոգին տանջող վիշտը, որովհետև նրանք զուրկ են հենց ազգային գիտակցությունից:

Լևոն համամիտք ընկերներ ուներ:
Նրանցից շատերն պարծենում էին,
Որ Հայ են ծնել, բայց Հայի խոցեր

⁶ Սմբատ Շահազիզի երեսնամյա հոբեյանը, Մոսկվա, 1994, էջ 22:

Նոցա խաղաղ կյանք խանգարում չէին:

Շահագիզի պոեմում հայրենիք, հայրենասիրություն, ազգային գիտակցություն հասկացությունները հասարակական արժեքներ են, որոնց միասնությունը կազմում է բանաստեղծի իդեալը: Այդ իդեալը կրողներին նա որոնում է հասարակության տարբեր շերտերում և համոզվում, որ դրանք եզակի անհատներ են դեռ և ի գորու չեն շրջելու ազգային կյանքի ընթացքը, ավելի շուտ՝ ընթացք հաղորդելու կյանքի ասիական անշարժությանը:

Ո՛վ հայրենակիցք, քանի՞ եք թըվով,
Որ այդ աչքերով նայեիք կյանքին,
Որ վայելեիք խաղաղ, անխռով
Այդ բարի վիճակ, այդ բախտ քաղցրագին:

Այստեղից է ծայր առնում Լևոնի վիշտը, որ նաև հեղինակի վիշտն է:

Պոեմի հերոսի համար հայրենիքն սկզբնապես երազային հեռավոր եզերք է, որին ձգտում է հասնել նա՝ քնավորված իր ազգային ծրագրերով:

Եվ հայրենիք... բայց ու՞ր է նա.
Քանի՞ գնաց արտասուք.
Երբեք նորան ես չտեսա...
Գեթ երազում վաղանցուկ:

Բայց իր՝ բանաստեղծի համար, իբրև 60-ական թվականների լուսավորական մշտավորականության ներկայացուցիչ, հայրենիքն ուներ իր նյութական կերպարը: Դա ամորալի ոգի չէր, ինչպիսին պիտի ներկայանար 20-րդ դարասկզբի հայրենասիրական տեսիլքներում, ասենք՝ մեխյանականների ապագայամետ կանխագծումներում: 60-ականների ազգային գիտակցության համար հայրենիքը հողի և ժողովրդի միասնությունն էր. հողը՝ իր աշխարհագրական որոշությամբ, բնաշխարհի խորհրդանշական մանրամասներով, ժողովուրդը՝ իր պատմությամբ, ազգային ավանդույթներով ու հոգեբանությամբ, լեզվով: Սակայն հայրենիքի այս իդեալական պատկերն ավերվում է ներկա իրականության կոշտ ուրվագծումներով, որ ավելի շատ են զբաղեցնում բանաստեղծի միտքն ու երևակայությունը: Եվ դեպի երազային հայրենիք հերոսի ճանփորդությանը զուգընթաց ընթերցողին դրվագ առ դրվագ ներկայացվում է այդ իրականությունը՝ իր ծանր մտահոգություններով:

«Լևոնի վիշտը» պոեմում 60-ականների հայ իրականության այդ խոշոր ուրվագծումների մեջ, իբրև բանաստեղծական վերապրում, հայրենիքը կա և չկա: Կա, որովհետև կա հողը՝ թեև գերության մեջ, կա այդ հողի վրա ապրող ժողովուրդը. չկա, քանի որ խզված է հողի և ժողովրդի կապը, խախտված է ազգային արժեքների միասնությունը: Հայրենիքը «տրտմության հովիտ» է՝ «կապարյա շղթաներով կապկապած», «անբույժ խոցեր կրծքի վրա»: Չկա անձի և ինչքի ապահովություն: Օրենքը հզորին է պաշտպանում, մեծատուների կուրծքը զարդարում է շքանշաններով, պատվանդան է բարձրացնում կեղծ

հայրենասիրությունը: Հայրենիքի սերը բաժին է մնացել համեստ «Համքարին», բայց դա էլ ոչ թե գիտակից, այլ կույր սեր է: Հոգու աղքատությունը մեռցրել է նաև ազգության ոգին՝ զոհելով նրան «կործանիչ արծաթասիրությանը».

Նյութապաշտ է Հայն, ցուրտ որպես սառույց,
Հաշիվների մեջ թաղված և մեռած.
Նա արդեն սրտից մերժել է վաղուց
Գեղեցկի տիպը. վկա՝ աստված:

Լուսավորիչ Շահազիզն ազգային գիտակցության ձևավորման առաջնային պայմանը համարում է ազգային կյանքը, որն էլ իր հերթին կարող է գոյավորվել՝ ոտքի տակ ունենալով սեփական հողը: Իհարկե, ոչ բանաստեղծի քնարական գեղումների մեջ, ոչ էլ նրա Դերոսի հայրենասիրական մտորումներում այդ հարցն ուղղակիորեն չի դրվում հասկանալի պատճառով, որի մասին ակնարկվում է պոեմում.

Եվ շատ ցավում եմ, որ ես չեմ իշխան,
Որ արծակ խոսել կարելի լիներ...

Բայց բանաստեղծը և նրա հերոսը տարբեր առիթներով անուղղակիորեն մերժենում են այդ խնդիրն, ինչպես, օրինակ, Գաղիբալդիի ազատագրական կռիվների, հանուն ազգային ինքնության՝ 5-րդ դարում հայ ժողովրդի հերոսական ընդվզումների մասին ոգևորությամբ խոսելիս: Եվ ինչպես 60-ական թվականների հայրենասիրական քնարերգության մեջ առհասարակ, այնպես էլ Շահազիզի պոեմում այդ ոգևորությամբ հաջորդում է խոր հիասթափություն՝ ներկա իրականության հանդեպ: Հայ ազգային կյանքի բացակայությունն իր հետ բերում է բազում անցանկալի, մտահոգիչ հետևանքներ: Հայը մոռանում է իր լեզուն, ազգային ավանդույթները, օտարանվության փստը թափանցում է հասարակության բոլոր շերտերը՝ սկսած ընտանիքից.

Այդ նահիր կյանքը թափում է յուր թույն
Բոլոր շրջակա բնության վերա.
Հոգի, հավատ, կամք, ուսում, կրթություն.
Սոքա մի խոսքով մնում են անգգա:

Շահազիզին մտահոգում է հատկապես հայ ընտանիքներում աղջիկների սխալ դաստիարակությունը, կնոջ անազատ վիճակը հասարակության մեջ: Հետաքրքիր է, որ բանաստեղծի երեսնամյա հորեյլանի առիթով մի խումբ (30 ստորագրություն) մոսկվաբնակ հայ կանայք հատուկ ուղերձով ողջունում են նրան՝ հիշեցնելով «Լևոնի վշտի» ոգեշունչ տողերը՝ ի պաշտպանություն հայ կանանց իրավունքների: «Այո,- գրում են նրանք,- մենք է Ձեր տված օգուտը Հայ ազգին ընդհանրապես և Հայ կնոջը մասնավորապես: Ոգևորված գրչով աշխատելով փարատել այն խավարը, որ տիրում էր Հայոց հասարակական մթնոլորտում, Դուք եռանդուն պաշտպան հանդիսացաք կանանց հարցի: Ձեր

բանաստեղծական գրվածքներում Դուք ծանոթացրիք հինգերորդ դարի մեր խնկելի մայրերի հետ, հիշեցրիք Հայ հասարակությանը, որ «Աստված ստեղծել է կնոջը մարդուն հավասար», և զարթեցրիք Հայ կնոջ մեջ յուր մարդկային իրավունքների ու հասարակական պաստակաճությունների գիտակցությունը»⁷: Այս ջերմ ուղերձը վկայում է, որ տասնամյակներ առաջ Շահագիզի ցանած սերմերը, իրոք, տվել էին իրենց ցանկալի պտուղները...

Հայ ազգային կյանքի և ազգային գիտակցության պայմաններում ծլարձակման պարարտ հող է գտնում նաև հասարակական մի այլ չարիք: Դա հայ կղերի՝ ընչասիրությամբ պայմանավորված ապագային գործունեությունն է, որ խարխլում է ազգության ու հավատի հիմքերը: Սահակի, Մեսրոպի, Ներսես Սեփի, հայության մյուս երախտավորների անունից բանաստեղծը նգովք է կարդում նրանց հեռավոր հետնորդներին՝ իր ժամանակի կղերին, որոնք, մոռանալով իրենց սուրբ առաքելության խորհուրդը, միայն «ավեր են բերում» ազգային կյանքին: Կղերի այսօրինակ վարքագիծը «Լևոնի վիշտը» պոեմում հետևանք է և ոչ թե պատճառ: Եվ տեղին չէ պոեմի առաջին գրախոս Ստ. Նազարյանցի դիտողությունը. «Իզուր է Լևոնը այդ բոլոր թշվառությունների պատճառը ընծայում հայոց կղերին, որպես թե դոքա էին միայնակ թշվառացուցիչը ազգի, իսկ ազգը ամենևին անպարտ է. նա մոռանում է, որ մի տգետ և վայրենացած ժողովրդի կղերը կարող չեն այլևս այլապես լինել, քան թե դույն իսկ ժողովուրդը, ուստի առանց որևիցե կրթության դաստիարակության ընտրվում են հողակոր պաշտոնյայքը»⁸: Ոչ պոեմի հեղինակը, ոչ նրա հերոսը ամենևին էլ չէին մոռանում, որ ազգային չարիքների հիմնական պատճառը ժողովրդի բոլոր խավերում տիրող ասիական հետամնացությունն ու խավարն է:

Լևոնի ծանր վշտերից մեկն էլ ծագում է այն գիտակցությունից, թե հայությունը շատ է հետ մնացել մարդկության առաջընթացից: Ուշացածության այդ երևույթը, որ միշտ էլ ուղեկցել է հայ ազգային ու մշակութային կյանքին, նոր ժամանակներում ավելի սուր էր զգացվում լուսավորական դարի բոլոր տեղաշարժերի պայմաններում: Դարերի ընթացքում գոյացած այդ անջրպետը հաղթահարելու համար համազգային ճիգեր էին պետք և ամենից առաջ՝ դպրոցներ, կրթություն, իրենց գործին նվիրված ուսումնական վարժապետներ: Պոեմի հերոսն այդ մասին հայտարարում է ուղղագծորեն, առանց ենթիմաստի.

Ուղիղ վարժապետ, ուղիղ մտածող,
Դաստիարակիչ մամուկ սերրնդի,
Ազգի պիտույքը հոր պես հոգացող.
Հառաջ քան դպրոցն ա՛յդ պետք է լինի:

⁷ Նույն տեղում, էջ 26:

⁸ Նազարյանց Ստ., Երկերի ժողովածու, էջ 416:

Բայց այս ամենը կյանքի կոչելու համար հիմնավոր հող է պետք, նպաստավոր միջավայր: Մինչդեռ «ցամաք է Զայի ասպարեզ», այնտեղ «դեռ չի ծաղկել Ծառը գիտության»: Զարկավոր է հետևել, դասեր քաղել եվրոպայից, որ «լի է կրթության գանձով», առատ է «հունձը լուսավորության», բայց հայը դեռ չունի հնձող մշակներ...

Շահագիզն իր պոեմում այս բոլոր չարիքների արմատը փնտրում է հայ հասարակության ներսում, ուր հայրենիք, հայրենասիրություն, ազգային գիտակցություն հիմնային արժեքները, լինելով միմյանցից տրոհված ու մեկուսացված, չէին կարող նպաստել բուն իմաստով ազգային կյանքի ծնավորմանը: Կար նաև բոլոր պատճառների պատճառը՝ ազատությունը, որ արդեն քանի դար է՝ հայության անհասանելի երազանքն էր: Ազատությունը՝ իբրև համամարդկային արժեք, ընկած է լուսավորական բոլոր գաղափարների ու կանխագծումների հիմքում: Ազատություն՝ ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր իմաստով: Ըստ լուսավորիչների՝ Աստված ազատ է, ազատ է ծնվում նաև մրա առարածը՝ մարդը: Ազատությունն ամեն մի գիտակից գոյության պայմանն ու բնական վիճակն է. նաև անհատի ներքին ազատությունը: Եթե խախտվում է այդ պայմանը, կործանարար հետևանքներն անխուսափելի են: «Լևոնի վիշտը» պոեմում հայ կյանքը, հայ մարդը, հայ հասարակությունը ներկայացված են հենց այդ վիճակում:

Պոեմի վերջում Շահագիզի հերոսը գալիս է այն դառն համոզման, որ հայ միջավայրը դեռ հեռու է ներքին ու արտաքին ազատության գիտակցությունից, ուստի և իր ծանր առաքելությունն անհնար է իրականացնել: Մնում է միայն երազել ու հավատալ, որ այդ օրը կգա.

Ազգ իմ, ողջ մնաս, և ես կաղոթեմ,
Որ քո բազուկներ քեզ հարուցանեն.
Ես մեծ փրկության Ձատիկը կըտոնեմ,
Երբ Զայե՛ր ազատ... մի օր ազա՛տ են:

«Լևոնի վիշտը» պոեմն, այսպիսով, ամփոփում և ամբողջացնում է ծրագրային առաջադրությունների այն համալիրը, որ գործառույթն էր նաև Շահագիզի քաղաքացիական քնարերգության մեջ և կազմում էր 60-ականների շարժման գաղափարական միջուկը: Պոեմն ավելի հետաքրքիր է՝ իբրև ժամանակակից թեմայով այդ ժանրի առաջին ըստեղծագործությունը հայ նոր գրականության մեջ, ինչպես նաև յուրահատուկ քնարաէպիկական բնույթով ու կառուցվածքով: